

Յարգարժան Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարար՝
Տիկին Հրանուշ Հակոբյան,
Մեծայարգ ներկայացուցիչներ պատկան մարմիններու,
Սիրելի հայրենակիցներ,

Նախքան օրուան նիւթին անցնիլը, մի քանի բառերով կը փափաքիմ յատուկ շնորհաւորութիւններս փոխանցել Սփիւռքի Նախարարութեան տարած մեծածաւալ աշխատանքին, որ զանազան բնագաւառներէ ներս համաժողովներ կազմակերպելով եւ ծրագիրներ մշակելով, կ'արդարացնէ սոյն նախարարութեան գոյութեան անհրաժեշտութիւնն ու առաքելութիւնը:

Շնորհակալութիւններս կը փափաքիմ փոխանցել նաեւ այս համաժողովը կազմակերպող յանձնախումբին, որ առիթը ընծայեց ինձի, այսօր խօսք առնելու եւ մտածումներս բաժնելու ձեզի հետ:

Անձնապէս, խանդավառ եմ Սփիւռքի նախարարութեան ստեղծումով եւ կը հաւատամ, որ ժամանակի ընթացքին, ան շարժիչ ուժը ու կամուրջը պիտի հանդիսանայ Սփիւռքի գաղութներուն եւ Հայրենիքի միջեւ գործակցութեան: Աշխատանքի դաշտը՝ ընդարձակ է, շօշափելի արդիւնքներու ապահովումը ներկայ պայմաններով՝ բաւական դժուար, իսկ Նախարարութեան գոյատեւումը ու յաջողութիւնը՝ խիստ կարեւոր:

Առաջին հերթին, պէտք է նկատի ունենանք, թէ Սփիւռքահայութեան պէտքերը տարբեր բնագաւառներէ ներս ո՞րոնք են: Պէտք է փորձենք հասկնալ Սփիւռքահայութեան մտայնութիւնը, կարիքը եւ պահանջը եւ ապա ջանանք, եթէ անշուշտ կարելի է, այդ կարիքներուն գոհացում տալ եւ կամ ստեղծենք այնպիսի պայմաններ, որպէսզի այդ պահանջներուն գոհացումը ապահովուի ինքնաբերաբար: Մի քանի օրինակներով պիտի փորձեմ լուսաբանել այս ըսածներս:

Առնենք գործարարի մը պարագան, որ կը փափաքի առեւտրականութեամբ զբաղող ընկերութիւն մը հիմնել Հայաստանի մէջ:

- Ի՞նչ են Հայաստանի օրէնքներով սահմանուած պայմանները
- Ընկերութիւն մը արձանագրելու գործընթացը ո՞րքան ժամանակի կը կարօտի
- Ապրանք ներածելու եւ արտածելու ճանապարհները ո՞րոնք են
- Տեղական տուրքերու արժեքը զանազան գործարարութիւններու պարագային ո՞րքան են
- Իսկ ամենակարեւորը՝ անսպասելի դժուարութիւններու պարագային, գործարարին կողմէ ներդրուած դրամագումարը ապահովական երաշխիքներ ու՞նի

Վերոյիշեալ հարցերուն կարելի է գոհացում տալ, յառաջացնելով խորհրդակցական ցուցմունքներ հայթայթող գրասենեակներ, որոնք ճիշդ խորհուրդներով պիտի կարենան ուղղութիւն տալ նմանօրինակ գործարարներուն, միեւնոյն ժամանակ անոնց տրամադրութեան տակ դնելով հայրեն եւ օտար լեզուներով երկրին օրէնքները ամփոփող գրքոյկ մը:

Երկրորդ օրինակը, կապ ունի Հայաստան-Սփիւռք մշակութային գետնի վրայ գործակցութեան: Չանազան գաղութներ, այս համագործակցութեան ծիրէն ներս, կը հրաւիրեն արուեստագետներ եւ կամ արուեստագետներէ բաղկացած խումբեր՝ անձնական նախաձեռնութեամբ: Դժբախտաբար սակայն, այսպիսի միջոցառումներ շատ ծանր նիւթական պարտաւորութիւններու տակ կը դնեն գաղութ մը, նկատի ունենալով արուեստագետներուն վարձատրութիւնը, ճանապարհի ծախսը եւ անոնց կեցութիւնը: Արդեօ՞ք Սփիւռքի երկար տարիներու անկնկալութիւնը Հայրենիքէն, գոնէ մշակութային ծիրէն ներս, սնունդ ստանալով գոյատեւելու տեսլականը չէ՞ր: Արդեօ՞ք Սփիւռքը արժանի չէ իր արուեստագետները վայելելու ձեռնտու նիւթական պարտաւորութիւններով:

Յարգելիներ,

Սփիւռքը, ծանր պայմաններու տակ տարիներով պայքարեցաւ հայ մնալու համար, պահելով իր լեզուն ու մշակոյթը եւ այլեւս սպառած է ու յոգնած: Հայրենիքէն մշակոյթը վայելելու ճամբով՝ հայ մնալու եւ զայն օտարին ծանօթացնելու միջոցները մատչելի չեն բնաւ եւ ակնկալուած նիւթական վարձատրութիւնները՝ երբեմն կը հասնին աներեւակայելի գումարներու:

Հոս մեծ դեր ունի կատարելիք Սփիւռքի նախարարութիւնը համագործակցութեամբ մշակոյթի նախարարութեան: Նոյն ատեն, պետք է ուշադիր ըլլալ, որ արժանի արուեստագետներ, որոնք իրենց արուեստով ու ներդրումով մեր մշակոյթի ողնասիւնը կը հանդիսանան, նորելուկ «արուեստագետներուն» շուքին տակ չմնան: Առաւել եւս, անոնք իրենց տարեկան ծրագիրներուն մէջ, ընդգրկեն բարեսիրական նպատակներով ելոյթներ ունենալու հաւանականութիւնը արտասահմանեան երկիրներու մէջ:

Ուրիշ կարելոր ազդակի մը պահանջքը մշակութային ծիրէն ներս, Հայաստանէն, զանազան արուեստներու մէջ կարող դաստիարակներու ժամանակաւոր գործուղումը դէպի տարբեր գաղութներ, որ պիտի ծառայէ այդ գաղութներու հայապահպանման ու գոյատեւման նպատակին: Այս առաջարկը բժախնդրութեամբ սերտուելու եւ ծրագրուելու պարագային, 2024-ի արդիւնքներ կ'ապահովէ ե՛ւ Հայաստանին ե՛ւ Սփիւռքին համար:

Հոս նշեմ, թէ վերջերս Հայկական գաղութներու կրթարաններուն ձրիաբար տրամադրուեցան Հայաստանի Կառավարութեան կողմէ գիրքեր եւ դասագիրքեր, որոնք սակայն արեւելահայերէն էին: Այս արարքը շնորհաւորելի ըլլալով հանդերձ, հայերէն լեզուի, պատմութեան ու աշխարհագրութեան ուսուցման համար, կարիքը կը զգացուի դասագիրքերու արեւմտահայերէն հրատարակութեան: Նոյնն է պարագան որեւէ նախարարութենէ ստացուած շրջաբերականներուն, որ աւելի գործնական պիտի ըլլայ եթէ պատրաստուի արեւմտահայերէնով:

Գալով հիմնական խնդրի մը, որու պակասը կը զգացուի, այն ալ քաղաքական յարաբերութիւններու ծիրէն ներս տեղեկութիւններ հաւաքելու մեքանիզմն է: Կարգ մը Եւրոպական երկիրներու Եւրոխորհրդարանի անդամներու ընկալած տեղեկութիւններէն եւ փորձարկութենէն օգտուելով, շատ բան կրնանք շահիլ, եթէ անոնց հետ ստեղծենք անձնական մակարդակի վրայ հիմնուած սերտ կապեր՝ ի շահ Հայաստանին: Այս հանգրուանին, ճիշդ պիտի ըլլայ առաջարկել, Սփիւռքի նախարարութեան մէջ գործող՝ Սփիւռքի խորհրդակականներու կողքին ունենալ Սփիւռքէն նշանակուած փոխ-նախարար մը մշակելու համար այս կապերը, որուն նստավայրը կրնայ որեւէ երկիր մը ըլլալ:

Վերջերս, Կիպրոսէն ներս գործող հայկական կազմակերպութեան մը կողմէ, յատուկ ուշադրութեանս յանձնուեցաւ Կիպրոսի Եւրոխորհրդարանի անդամի մը անբարենպաստ կեցուածքը՝ Ղարաբաղեան հարցին գծով: Հոս հաստատ կերպով կը պնդեմ, թէ այսպիսի երեւոյթներու պատասխանատուն մասամբ մը մենք են, որովհետեւ քաղաքական ոլորտէն ներս հեղինակութիւն ունեցող